

տուններէն, դպրոցներէն, ազգային, ընկերային ու կրօնական հաստատութիւններէն ներս, ու Սրբութեան համբոյրը եկեղեցիին մէջ և սէր բոլոր սիրտերուն խորը, Ան որ իր եղբայրը կ'ստէ, մարգասպան է, և ատելութիւնը՝ ծրագիրն է սպանութեան, իր սաղմնային վիճակին մէջ, իսկ սպանութիւնը՝ գործնականացած ատելութիւնը, եթէ ապրիւ կ'ուզէք, սիրեցէք, եթէ ամիւ ու զարգանալ կ'ուզէք, սիրեցէք, ու եթէ կ'ուզէք սիրուիլ ու յաղթել, դարձեալ սիրեցէք, վասնզի Աստուած սէր է և ի գլուխ պատուիրանին, առաքեալին քաջատրութեամբ, դարձեալ Սէր է:

Այսօրուան մարդկութիւնը արդարու թիւն կը փնտռէ ու խաղաղութիւն կ'որոնէ, բայց խաղաղութիւնն ու արդարութիւնը իրան իմնուիլ միայն Սիրոյ վրայ: Ատելութիւնն ու խաղաղութիւնը սակայն չեն կրնար զիրար գտնել և ոչ ալ հաշտուիլ իրարու հետ, առանց խաղաղութեան խորհրդանիշը եղող սիրոյն: Եղբայրասիրտիւնը քրիստոնէական մեծագոյն բարիքն է արդի քաղաքակրթութեան: Սիրել Աստուած ու մարդկութիւնը, ծառայել Աստուծոյ և մարդոց, քրիստոնէական կրօնի և մարդկային բարոյականիշու քաղաքակրթութեան զերգոյն պատուէրն ու պատգամն է, որ անգամ մը ևս ծառայութեան և սրբութեան այս բովանդակէ կ'ուղղուի ձեզի բոլորիդ:

Արդարութեան, խաղաղութեան և սիրոյ այս պատգամին ընդմէջէն, այս առիթով, կը փափաքեմ որ մեր շնորհակալութեան և երախտագիտութեան զգացումները, միացած մեր սրտաբուխ աղօթքներուն, մատուցուին Ամենակալին՝ արեւշատութեան, երջանիկ ու բարգաւառ կեանքին համար Մեր արդարակորով և իմաստուն վեհապետին՝ Հիւսէյն Թազաւորին, Հաշիմական գերդաստանի բալոր անդամներուն, ու իր բարեխառմ վառաժանութեան կորովամիտ պաշտօնակալներուն, որպէսզի Յորդանանը կարենայ վայելիլ խաղաղութեան և արդարութեան բարիքները տեսալէս, ու մեզ շնորհուի պատենութիւնը ազատորէն Աստուծային Ս. խորհուրդը և մեր աղօթքները ձայնասփռելու ի սփիւռս աշխարհի ցրուած մեր ժողովուրդին հոգեւոր մխիթարութեան և ի փառս Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

Հ.

## ԴԵՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ

### ՄԵՐ ՀԱՒԱՏՔԻՆ ՔԱՆԴԻԶՆԵՐԸ

(ՆՐԻԿ ԵՒ ԱՅՍՈՐ)

II

Հայաստանեայց Ս. Եկեղեցին Քրիստոսի արիւնսով գնուած հաւատացեալներու ժողովն է, պատկերաւոր բացատրութեամբ, երկրէն երկիրք բարձրացող ամուր աշտաւակը, Քրիստոսի միասիրտ և միակեղու հաւատացեալներուն: Մեր Եկեղեցին հրեղէն զէնքն է եղած մեր հոգիին, մեր պատմութեան արիւնոտ ծփանքներուն զիմաց, այլ մանաւանդ՝ մեզ իրարու զօրող, անխորտակ մենքի մը վերածող կապը: Այս սկզբունքով, մենք ապրողներս իրարու հետ ըլլալէ յետոյ, միացած կ'ըլլանք նաև մեր փառաւոր նախնիքներուն և անոնց անքակտելի հաւատքին:

Այս սրբազան միութիւնը անհրաժեշտ է թէ՛ դաւանական և թէ՛ բարոյական գետններու վրայ, ինչպէս նաև պաշտամունքի, տարողութեանց, շնորհարաշխութեան, և կանոնական ու վարչական կարգաւորման մէջ:

Հայ Եկեղեցին, իր գոյութեան առաջին օրէն իսկ՝ եղաւ մին այն արմատներէն, որոնց վրայ յետոյ պիտի բարձրանար քրիստոնէութեան հսկայ ծառը: Անիկա Աւետարանի և կէն նոյնիսկ ստացաւ իր կեանքին յոյգը, բոլոր միւս հին և մեծ Եկեղեցիներու կողքին: Անոնց հետ մշակեց և որդեգրեց Քրիստոնէական հաւատքին հրամանակարգ (Dogme) մայր սկզբունքները, և անոնց շարքին վրայ և՛ հզաւ մին անոնցմէ, որոնք յաւէտ կառչած ձեռքին Քրիստոնէական աստուածաբանութեան հնագոյն այն վարդապետութիւններուն, զորս ընդհանուր Եկեղեցին մտածած ու բանաձևած էր, երբ զեռ քիչ մը շատ մարդկօրէն մտածումներ էջին պղտորած իր ներքին կեանքը:

Ներկան անցեալին հետ կապող ամենէն ուժեղ զօրքերէն մին եղած է Հայ Եկեղեցւոյ մէջ՝ աւանդութիւնը, տեսալ մը համայնական յիշողութիւն, որ՝ խառնուած, համաձուլուած ցեղային մտայնութեան հետ՝

ազգային ողջմտութեան նմանող բան մը զարձած է այլևս մեզի համար: Ան եղած է միշտ, աւելի կամ նուազ աստիճանով մը, չուկէտը իր ապագային մասին իր կողմէն որոճացուած ամէն հայեցողութեան: «Արաւս աւանդեցին մեզ հարքն մեր»: այս խօսքը անմաշ կաղապարն է եղած, որով կնքուած են մեր հաւատքին և ըմբռնումին վկայութիւններ տուող բոլոր վաւերագիրները:

Եկեղեցին իբրև Ս. Հոգիի ներգործութեան ներքե ընթացող հաստատութիւն մը, անվթար պահպանել պարտի առաքելական և հայրապետահաստատ աւանդութիւնները, որպէսզի չզրոյէ իր ինքնութեան և էութեան: Այս մեծ իրողութեան է որ կ'աւելարկէ Պօղոս առաքելը, իր Կորնթացիներուն գրած Ա. Թուղթին մէջ, հրք կ'ըսէ. «Աղաչեմ զձեզ եղբարք անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, և մի՛ իցին ի ձեզ կերծուածք», և նշովքով կ'արգիլէ քարողութեան գուրս բան լսելը. «Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաք»՝ ձեզ, նշովեալ լիցիս (Պաղ. Ա. 8): Կը հրամայէ բացէ ի բաց մերժել կերծուածները և խորշիլ անոնցմէ, որովհետև անոնք դայթաւղութիւն և պառակտում կը բերեն Քրիստոսի ճշմարիտ հօտին:

Աւանդական այս իրողութիւններու համաձայն, Հայ Եկեղեցին դարերով, ոգի ի բոյն, ջանացած է պահել իր միութիւնը Քրիստոսի հետ, իբրև նշան կատարելութեան և ներդաշնակութեան, վասնզի Քրիստոսի ճշմարիտ երկրպագուն չի կրնար չը խորշիլ և չհեռանալ իր հաւատքն ու օրբազան զգացումները վիրաւորողէն և արհամարհողէն:

Մեր հաւատոյ հայր և երկրորդ Հուսաւորիչը Ս. Գրիգոր, բազմաթիւ անգամներ կը հրամայէ իր հոգևոր զաւակներուն՝ զգոյշ ըլլալ և չչեղիլ իր քարոզածներէն, «մ'չյաջլ և ո'չ յահեակոյ: Աստուածաբաւ հայրապետ միևնոյն ատեն մատնացոյց կ'ընէ նաև անոր օգուտը, և Ամենայն որ քակի ի միաբանութենէ հաւատոցն և սուրբ վարուցն, ոչ միայն հրաժեշտ լինի յերանուածնէն անտի, այլ և ի պատիժ լինի, և կամ

զսոյ ի ծառոյ կտրեալ ի հուր» (Թաճախ, էջ 114):

Հակառակ վերոյիշեալ մեծ իրողութիւններուն, մեր Եկեղեցւոյ բարձրաստիճան եկեղեցականներէն մին՝ որուն միտքը իր կեանքին պէս եղած է միշտ անկայուն, արտակիզորոն և աղանդավոր, նոյնիսկ ամենէն նուիրական գեղիներու վրայ, նախ կ'ան Տիրան Վարդապետը, և այժմու Տիրան Արքեպիսկոպոսը, այսպէս ուզած է արտայայտուիլ մեր կրօնի մեծագոյն իրողութեան, Յիսուսի Յարութեան նկատմամբ:

«Գայթակղութեան քար մը եղած է ... մարմնի յարութեան վարդապետութիւնը: Ամենէն անբանաւոր յայտարարութիւնը կը թուի տն՝ բազմաթիւ մարդերու, ըլլան աւանդ Քրիստոսի հօտէն ներս կամ դուրս իրարմ բռնողներ, ամենէն անբանաւորը զոր Քրիստոսի Եկեղեցին բրած ըլլայ և նետած՝ դարերու և մարդերու առջև՝ ճշմարտութեան մը պիտակովը: Կը թուի տն հաստատում մը՝ գրիթէ հայհոյանք՝ մարդկային իմացականութեան դէմ: Կան նոյնիսկ եկեղեցականներ՝ որ խիղճ կ'ընեն անդադառնալու՝ և խօսելու անոր վրայ, նախապաշարեալ և տգէտ երեւնալու վախէն, ժւր մեաց պաշտպանելու զայն» (Սիոն, 1935, թ. 5, էջ 140):

Տիրան Արքեպո. չի հաւատար Քրիստոսի մարմնով յարութեան, զայն նկատելով հայհոյանք և ամենէն անբանաւոր, և կ'աւելցնէ. «Քրիստոսնէութիւնը կ'ըսէ թէ Քրիստոսի գերեզմանը որ Արքաթ օրը խաչուած և մեռած մարմին մը ամփոփած էր իր մէջ, Երկուշաբթի առաւօտուն դատարկ գտնուեցաւ: Այս դատարկութիւնը բացատրող վարկածները այնքան դատարկ են ու ողջմտութեան հակառակ՝ որ նախապաշարեալ մտքի վիժումներ ըլլան անդին չեն անցնիր» (էջ 142):

Ամէն ճշմարիտ քրիստոնեայ գիտէ և կ'ընդունի թէ միւր Փրկիչը Զատիկի առաւօտուն յարութեամբ դուրս եկաւ գերեզմանէն, իր սեփական մարմնովը, անով վերացաւ երկինք և միևնոյն մարմնով վերստին պիտի գայ յարուցանելու մեռածները, ողջերուն հետ դատելու համար զանոնք: Մեր սրբազան հայրապետները ուզած են նոյնիսկ որոշ շեշտ մը դնել Նիկիական հանգա-

նակի Յիսուսի յարուժեան վերաբերեալ համարին վրայ, նշողիւով մոլորութիւնը այն կերեւորկոսներուն՝ որոնք կը ժպրհէին քարոզիլ թէ Քրիստոս առանց մարդկային մարմնի բարձրացաւ երկինք։

Մեր Փրկչի մարմնով յարութիւնը կը հաստատուի առաքելական քարոզութեամբ. (Լորս աւետարանները, Գործք Գ. 15, Ժ. 40, ԺԳ. 30 ևս. Հռոմ. Ա. 4, Դ. 24 ևս. Պետրոս, Ա. 3, 27, Գ. 21 ևս.)։ Բայց աւելի մանրամասնութեամբ՝ Պողոսի առ կոնթրացիա Ա. Թղթին մէջ։ Այս հինգ վաւերագիրները համաձայն են իրարու հետ, պատմելու համար թէ Յիսուս պարտ ու պատշաճ թաղուելէ վերջ՝ վերակենդանացաւ, թէ իր աշակերտներուն երեւցաւ շատ անգամներ և անոնց տուաւ գերեզմանին վրայ Փրկչութեան բացորոշ համոզումը։

Որովհետեւ, այն համոզումը թէ Յիսուս կրնայ վերադարձի միայն իր հոգիովը՝ տեղ չէր կրնար գտնել առաքելներու մտքին մէջ։ Յիսուս Քրիստոսի մարմնով վերակենդանուի հաստատելով, առաքելական ուսուցումը — որ այս մասին համաձայն է մեր գարու գիտութեան լաւագոյնս հաստատուած արդիւնքներու հետ — կը պաշտպանէ մարդկային անձին տնւածելի միութիւնը, որ, ոչ միայն չի կերքուիր աւետարանէն, այլ անկէ կ'ընդունի իր լիովին ներդաշնակութիւնը, այսինքն այն՝ որ բոլոր գարերու ջրիստոնեաներուն խոստացուած է Տիրոջ Յարութեան իրողութեամբ։

Փառաւորեալ Փրկչը նոյն է երկրաւոր Քրիստոսին հետ, միայն իր գործունէութեան պայմանները տարբեր են։ Քննադատութիւնը և սոփեստ գիտնականութիւնը չեն կրնար բացատրել թէ ի՞նչ է այս հոգեւոր գործարանաւորութիւնը՝ հարկադրաբար երկրաւոր կենցաղագրաբար Աւելորդ և անիմաստ է կարծել թէ կարելի է մարդկային հոսկացողութեան սահմանով բացատրել թէ Յիսուսի մարմինը գերեզմանի վրայ տարած յաղթութեամբ, կրնց ստուգիւ յառաջատուական փառաւորում մը, ինչպէս ուզած են խորհիլ աստուածաբաններէն ոմանք։ Ինչ որ աւետարանական պատմուածքներէն յստակօրէն կ'ըզրակացուի, սա է թէ Քրիստոս, երկրաւոր կենսութիւնը պայմանները թօթափելէն ետքն ալ,

իրեններուն երեւցաւ անոնց ընտանի եղած ձևին տակ, զանոնք լաւագոյն կերպով համոզելու համար իր մարմնով Յարութեան իրականութեան մասին։

Ինչգիշերը Հայ Եկեղեցւոյ աստուածաբան գաւառող մեծամիտ Տիրան Արքեպիսկոպոսը տակաւին չի գիտեր թէ թափուր գերեզմանը մեր Տիրոջ՝ բնութեան մէջ իր օրինակը չունեցող գերբնական երևոյթ մը և իրականութիւն մըն է, իրրեւ հրաշք և ստեղծագործութիւն։ Աստուած, որ ի սկզբունէ արար գերկին և գերկիր, կը շարունակէ ստեղծել։ Գիտութիւնը մեծաւի յարուսթեան բնեւորոյթը չի ճանչնար, գէթ չի հաստատեր։ Յարութիւնը գաղտնիք մըն է գիտութեան համար, սակայն Քրիստոնէականութիւնն ու Քրիստոնեան կ'ընդունին թէ Յիսուս որ մեռաւ և թաղուեցաւ, վերակենդանացաւ իր մարմնով, և դարձեալ մարդոց տեսանելի, ըմբռնելի, շօշափելի, իմանալի և սիրելի եղաւ։ Քրիստոնէականութեան մեծագոյն հրաշքը Քրիստոսի անձն է և այդ անձին Յարութիւնը։ Յիսուսի մարմնով Յարութիւնն ու աստուածութիւնը իրարու լրացուցիչ եզրեր են, կարելի չէ մին ենթադրել և ընդունիլ առանց միասին։ Ան որ աստուած չէ, չի կրնար ինչգիշերը յարուցանել. մեր գերագոյն համոզումն է թէ Յարուցեցաւ չոր Աստուծոյ յաւիտեակից Բանն է որ իր անձին վրայ մարդկային ժամանակաւոր գոյացութիւնը առնելով հանդերձ՝ ապրեցաւ իրրեւ Աստուած և մարդ միանգամայն, անբաժան պահելով Աստուածութիւնը իր մարդկայինէն և փոխադարձաբար։ Մեր փրկութեան համար կամաւորապէս յանձն առաւ ոչ միայն չարաբանքն ու մահը, այլ նաև երեքօրեայ թաղուել և ինչպէս անպարագիւրիմ ծնած էր կոյս մօրէ մը, հաճեցաւ պարփակուիլ գերեզմանի մը մէջ՝ և համաձայն իր կանխապացութեան՝ թէ՛ սեղիցի որդի մարդոյ ի սիրտ երկրի գերիւ տիւս և գերիս գիշերս (Մատթ. ԺԲ. 40)։ Մեզի համար մահուան դուր և զոյ գերեզմանը իրեն համար եղաւ կենդանութեան աղբիւր, կամ մայրենի արգանք, որ ընդունեց մեռեալ մը և ծնաւ ողջ մարմին մը։

Բացի աւետարանական և առաքելական պատգամներէն, բոլոր սուրբ հայերը կը

հաւաստեն թէ Քրիստոս Բարութիւն առաւ գերեզման դրուած իր սեփական մարմնովը: Որով անբաժան էր Աստուածութիւնը: Ուսկայն մտիկ ընենք թէ ինչ կը գրէ Տիրան Արքեպիսկոպոսը: «Դեր օրերու այս մեծ հեւրատիկութեւ, Վերիստոս մարդուն հոգին ի սկզբան միս և մարմին եղաւ, բայց ի վերջոյ միս մարմինը չբացաւ . . . ունայնու-թեանը զգեցած կարեկիր մարմինը, միզք եղած մասը, ապականութեան ենթակայ էր և եղաւ . . . Անոր մեռնելու վայրկեանը ուրիշ բան չէ՛ եթէ ոչ մտեղէն մարմնի գաղ-րիւր Քրիստոսինը ըլլալէ . . . Ոչնչացաւ ան այնպէս՝ ինչպէս կ'ոչնչանայ կիզելի նիւթը սաստիկ կրակին մէջ» (անդ, էջ 143 - 145):

Քրիստոնէութեան գերագոյն իրականու-թեան և խորհուրդին գէմ նետուած հայ-հոյութիւններ են ասոնք, կրօնաւորի մը կողմէն՝ որ Յարութեան իրականութեան և խորհուրդին մէջ չբացումէ զատ ուրիշ բան չի տեսներ: Եկեղեցիէն երիցս նոզովուած յայտնի հերետիկոսներ և անհաւատներն ան-գամ՝ չեն համարձակած բացորոշ կերպով ըսելու այսքան ծածաղելի անտեղութիւն-ները: Քրիստոնէական հաւատքի հիմնակէտը նկատուած է մեր Փրկչի աստուածային մար-մնին անապականութիւնն ու վերակենդա-նութիւնը:

Սակայն շարունակենք լսել, թէ ինչ կ'ընէ աստուածաբանութենէն ճառող այս մեծ իմաստակը, որ Տիրան Արքեպիսկոպոս Ներսիսեան անունով ծանօթ է մեր եկեղե-ցականութեան շարքին մէջ, Վերիստոս իր արձակած մահուան վճիռը գործադրեց նախ իր մտեղէն մարմնի վրայ, դատարկելով գե-րեզմանը մարմինէ, դիակէ, ինչպէս պիտի դատարկուի տիեզերքը մօէն նիւթէ, երբ յաւիտեանները իրենց լրման հասնին, մինչ զԱյն ճանչցանք այս երկրի վրայ մտեղէն մարմնով՝ Գարութենէն ետք նոյն կերպով չէ որ ունի Ան իր մարմինը: Երբ փրկու-թեան գործը կատարուեցաւ՝ ալ չկար մար-մին մտեղէն, վերջացած էր անոր գերը» (անդ, էջ 144):

Իսկ ի՞նչ կ'ըսեն աւետարանները. «Եւ էր երեկոյ ի միաշարաթւոյ աւուրն, և դրօք փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն Կիւն Հրէից, եկն Յիսուս և եկաց ի

միջի նոցա, և ասէ ցնոսաւ. ողջոյն ընդ ձեզ, իբրեւ զայս ասաց. եցոյց նոցա զձեռս և զկողան իւրօ (Յովհ. Ի. 19-20), Դարձեալ նոյն աւետարանին մէջ, «Ապա ասէ ցթով-մաս, բեր զմատուին քո և արկ այսր և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո և մխեա ի կողս իմ, և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ»:

Տակաւին, «Ձի՛ խռովեալ էք, և ընդէ՛ր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր: Տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. չօշա-փեցէք զիս և տեսէք, զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիսս տեսանէք զի ունիմ: Եւ զայս ասացեալ եցոյց նոցա զձեռսն և զոտս» (Ղուկ. ԻԲ. 38-41):

Այոպէս բոլոր իր աշակերտներն ու բա-րեկամները, որոնք տեսեր էին Անոր գե-րեզմանելովը՝ իբր մեռեալ, տեսնելով, լսե-լով և չօշափելով Ձինքը ինչպէս երբեք, կ'ընդունին Ձայն իբրեւ կենդանի: Բոլորն ալ կը ճանչան Ձայն, ոմանք՝ պարտէլին մէջ, իր նայուածքէն ու ձայնի չնշտէն. ուրիշներ՝ Վերնատան հաւաքումին մէջ, իր վերքերէն և սիրոյ սաստէն. այլք՝ ծո-վակին ափուները, իր սրտապնդող Ժպիտին քաղցրութենէն, և ուրիշներ տակաւին՝ լոյս երկնքին տակ, կամ խոնարհ յարկի մը տե-ղանին առջև, իր անձին երանաւետող ներ-գործութենէն:

Քրիստոսի մարմնով Թարութեան հա-ւատքը խաբխիսն է քրիստոնէական կեան-քին, առանցքը Քրիստոնէութեան քարո-զութեան և հիմնապայմանը հոգեւորական աստիճանի արժանեաց, կրօնական ասպա-րէզի ու է գործիչ երբ չունի Քրիստոսի մարմնով Թարութեան մասին իրական հա-ւատք, չի կրնար լրիւ կատարել իր գործը:

Ձի բուռը ապացոյցներ գոտաւորել վիտ-նօրէն ու ճառել ոգեւորուած հստորու-թեամբ, այլ վկայ լինել, խօսիլ ոչ թէ ար-ուեստով, այլ կեանքով: Վկայել՝ կը նշա-նակէ ականատեսի համոզումով արտա-յայտուիլ:

Քրիստոսի Թարութիւնը քրիստոնէական կեանքին «կեդրոնական ճշմարտութիւնն է»։ անոնք որ հոգեկան ներքին փորձա-նութեամբ, այսինքն իրազգած յայտնա-տեսութեամբ կրնան վկայել Անոր մասին, առաքելական արժանիքի է որ կը տիրանան:

Առաքեալները, Պետրոսէն մինչև Պօղոս, հաւատացած են՝ վասնզի տեսած են, տեսած են՝ վասնզի տեսնելու բան մը եղած է, վասնզի Յիսուս, զոր իսկապէս տեսած են, իրապէս գերեզմանէն դուրս ելած էր իր մարմնով։ Եթէ Քրիստոս Յարութիւն առած չէ իր մարմնով, ոչ միայն մեր մէջ չի կրնար ունենալ այն ներգործութիւնը զոր մենք կ'ենթադրենք, այլ ընդմիջող բաժնուած կը մնայ իր Եկեղեցիին, ընկզմուած ըլլալով գերեզմանէն, և մենք, իր կարծեցեալ աշակերտները, առանց Աստուծոյ և առանց յոյսի կը մնանք Եկեղեցիին մէջ։

Իսկ Համբարձումը բնական պատկեր է Յարութեան, որուն հետ յաճախ կը շփուի արդէն առաքելական ուսուցումին մէջ։ Առաքելական Թուղթերը չեն խօսիր Փրկչի այս վերածնունդի մասին, բայց կ'ենթադրեն զայն, երբ կը հաստատեն Յիսուս Քրիստոսի բազմաթիւ փառաց մէջ։ Այսպէս, Յարութեան Քրիստոսը անկորնչական կեանքի սկիզբը կ'ըլլայ, իր Եկեղեցիին համար, զայն միշտ վեր բռնելով զարեւու ընդմէջէն, մինչև որ օր մը Անոր հետ ըլլայ իր վերջնական յաղթանակի միջոցին, երկնից հանգստեան ու փառքին մէջ։

Արեւի յետ Յարութեան մեր Տէրը նոյն էր և ունէր մարմին և ուրիշ։ Հետեաբար նշուելով պէտք է նկատել բոլոր այն ապուրձան ջրիստոնիսները, երբ մանաւանդ առնենք իրօնաւորներ են, որոնք կը յանգզին չարափառ Տիրանին հետ հաշտութեամբ ուրանալ Քրիստոսի մարմնով Յարութիւնը, յայտարարելով թէ Յիսուսի մարմինը ոչնչացած է գերեզմանին մէջ նորիմ տարրաւորութեամբ։

Մարմին Յարութիւնը նախկին կեանքի մէջ վերահաստատում մը (Restoration) չէ, այլ յայտնութիւն նոր կեանքի մը, նոր ուժերու և նոր գործունէութեան եղանակի մը։ Տէրը Յարութիւն առաւ գերեզմանէն, և անոնք որ Ձինքը գիտէին՝ ճանչցան թէ Ան նոյն էր։

Մարմիններու յարութիւնը զմեզ գոյութեան նոր փուլի մը մէջ կը գնէ, որու մասին մենք մեր արդի վիճակին մէջ չառաւարտ կերպով միայն կրնանք գիտնալ։ Յիսուսի անձին մէջ մենք կը տեսնենք մար-

դուն աւարդութիւնը։ Իր մարմինը և իր հոգին միասին Յարութիւն առած գերեզմանէն ու փառաւորուած, որ է ըսել թէ բան մը չպակսելէն զատ, վրան աւելցած է փառաւորութիւնը, այսինքն ապականացուն անապական եղած և մահկանացու մասը անհաւորով կրնանք եզրակացնել թէ մարմինը էական է մարդուն ամբողջութեանը համար, ըլլայ հոս ըլլայ ապագայ կեանքին մէջ։

Հայ Եկեղեցւոյ մէջ, դարեւ ի վեր, առաջին անգամն է որ եկեղեցական մը կը համարձակուի ուրանալ Քրիստոնէութեան մեծագոյն իրականութիւնը, Յիսուսի մարմնով Յարութիւնը, հակառակ Նիկիական հանգանակի քացորոշ տրամադրութեան, սչարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերբորդ աւուր յարուցեալ, ելեալ յերկինս նոյնին մարմնով և նստաւ ընդ աշմէ Հօրոյ։

Տիրան հրեաթիկոսի այս գալթակողութիւնը տտեմին գրաւեց ուղարկութիւնը մեր Եկեղեցւոյ բարձրագոյն գասէն կարգ մը եկեղեցականներու, Նիրսէս Արքեպս. Մելիթքեանի, Գարեգին Եպս. Յովսէփեան, Ռիթմարեան հայրեր, որոնք Թորգոմ Պատրիարքին զբաժ իրենց նամակներով և մամուլով դատապարտեցին չարափառը, պահանջելով որ կարգադրուի ան, նկատելով որ հաւատքէ պարպուած եկեղեցականը ամենէն վտանգաւոր և հրէշալիս տիպն է, զոր կարելի ըլլայ երբեք երեսակալի։ Թորգոմ Պատրիարքը այդ օրերուն խնայեց իրեն, բայց զազրեցուց զինքը Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Տեսչութեանէն և դուրս զրկեց զինքը Վանքէն։

Այս գալթակողութիւնը փոխանակ իր վրայ հրաւիրելու մեր եկեղեցականութեան զգուշանքն ու զայրութիւնը, իր մանկաւեկները աստուածաբանի տիտղոսին արժանացուցին զինքը, և մեր անտեղեակ ու կիսակիրթ եկեղեցականութիւնն ալ ընդունեց և ուղեց համոզուիլ այս չըլուած իրողութեան։

Ե.

